

## Հասի՛ր GoPro-ին քո հեծանիվով

Interactive TV ընկերությունը սիրով հրավիրում է հեծանիվի սիրահարներին մասնակցելու հեծանվային հետաքրքիր մրցույթին և շահելու GoPro տեսախցիկ:


Հունիսի 7-ին Interactive-ի հետ միասին մուտք գործի՛ր Հարավարևմտյան թաղամաս քո հեծանիվով, մասնակցի՛ր հեծանվավազքին և շահի՛ր GoPro տեսախցիկ:

Մրցույթին մասնակցելու համար խնդրում ենք լրացնել **ղիմում-հայտը**:

Շտապի՛ր, քանի որ մասնակիցների թիվը սահմանափակ է:

## Մրցույթի նկարագրություն

- **Վայր-ՀԱԹ, Սբ. Երրորդություն եկեղեցու բակ (270մ տարածք)**



- **Ամսաթիվ-07.06.2014**
- **Ժամը-16:30-20:00 (շաբաթ)**
- **Գրանցում-ղիմում-հայտով**, որը բեռնվում <http://www.interactive.am/am-news-18.html> կայքից, լրացվում է և ուղարկվում է [marathon@interactive.am](mailto:marathon@interactive.am) էլ. հասցեին:
- **Մասնակիցների թիվը-60**
- Հունիսի 7-ին՝ ժամը 16:30-ին, բոլոր գրանցված անձինք հրավիրվում են մրցույթի անցկացման վայր: Եկեղեցու բակի ներքևի հատվածից վիճակահանությամբ ընտրված 2-ական հեծանվորդ մրցում են մինչև եկեղեցու մյուս կողմում գտնվող խաղահրապարակը (270 մ): Յուրաքանչյուր զույգից այն հեծանվորդը, ով առաջինն է

հասնում վերջնակետին, ներառվում է 30 մասնակիցների ցանկում, ովքեր անցնում են երկրորդ փուլ:

- Երկրորդ փուլում մրցույթն անցկացվում է մնացած 30 մասնակիցների միջև՝ առաջին փուլի նմանությամբ: Արդյունքում, համապատասխանաբար 15 լավագույն մասնակիցներն անցնում են վերջին՝ որոշիչ փուլ:
- Վերջին փուլում 15 մասնակիցները մրցում են անհատական ժամանակով: Այն մասնակիցը, ով ամենակարճ ժամանակահատվածում կհասնի վերջնակետին, կհամարվի հաղթող և կստանա գլխավոր մրցանակը՝ GoPro տեսախցիկ: 2-րդ և 3-րդ արդյունքները գրանցած մասնակիցները կստանան, համապատասխանաբար, հեծանվային սաղավարտ և հեծանվորդի համար նախատեսված՝ ջրի թերմոս: